Հկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ք. ԵՐԵՎԱՆ
## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ N01/18-07/2-55646-1101

«29» 11 2012թ.

Օբյեկտ *Կենտրոնական ծածկած շուկայի մասնակի վերակառուցման, պահպանված հատվածի վերականգնման և ուժեղացման*

(կառուցվող, վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտի անվանումը, հակիրճ բնորոշումը, հզորությունը)

*աշխատանքային* նախագծային փաստաթղթերի մշակման

(նախագծման փուլը)

Հասցեն *Կենտրոն վարչական շրջան, Մաշտոցի պող. հ.5*

(շինարարության կամ փոստային հասցեն)

Կառուցապատող *«Երևանի թիվ 1 շուկա» ՍՊ ընկերություն*

(կազմակերպության անվանումը, անհատ անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը)

Առաջադրանքի տրամադրման հիմք *Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 07. 08. 2007 թ. թիվ 2289143 վկայականը, ՀՀ մշակույթի նախարարության 20. 01. 2012 թ. տրված հ. 05/14-1/160-12 դրական եզրակացությունը և 19.11.2012 թ. հ. 14-1/4706-12 գրությունը, Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված 27. 06. 2012 թ. հ. 07/18-05/02-12255-573 աշխատանքային նախագիծը, ՀՀ մշակույթի նախարարության կողմից համաձայնեցված էսքիզային նախագիծը:*

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման, քաղաքաշինական այլ գործունեության հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթեր.

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հողամասը գտնվում է *Բնակելի կառուցապատման գոտում*

(բնակավայրի կենտրոնական, բնակելի կառուցապատման, արտադրական, հասարակական, կոմունալ, հուշարձանների պահպանման, հանգստի գոտիներում և այլն)

Հողամասի չափերը *5083.35 քմ*

(հողամասի մակերեսը՝ հա)

Հողամասի առկա վիճակը ——

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, պատերի նյութը և այլն). կանաչապատումը, բարեկարգումը և այլն՝ կից սխեմայով՝ Մ 1:500)

Տրանսպորտային պայմանները *Մաշտոցի պող., Պարոնյան փող.*

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

Ինժեներական սարքավորումներ *Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական ցծեր և հաղորդակցուղիներ*

(նախագծվող կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները)

Կից հողամասեր *Մաշտոցի պող., ներքակային ճանապարհներ*

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

Բնության և մշակույթի հուշարձաններ *Հանրապետական նշանակության հուշարձան–շենք /թիվ 152/*

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

Հատակագծային սահմանափակումներ *Հաշվի առնել առկա կառուցապատումը, ապահովել կից կառույցների և հողատարածքների շահագործման պայմանները:*

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ճարտարապետահատակագծային պահանջները *Մշակել փակ շուկայի սեյսմազինվածության ավելացման և վերակառուցման նախագիծ:*

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

| | |
|---|---|
| Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից | ------ |
| հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) | *Ըստ նորմատիվ պահանջների:* |
| թույլատրելի բարձրությունը | *Պահպանել վերակառուցվող հատվածի գոյություն ունեցող բարձրության նիշերը:* |
| կառուցապատման խտությունը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | ------ |
| կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անցրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) | ----- |
| կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) | ------ |
| այլ պահանջներ | |

- *Կատարել հուշարձան–շենքի պահպանված հատվածի կառույցի չափագրության և ուսումնասիրման աշխատանքներ:*
- *Մշակել կառույցի վերգետնյա հատվածի ետնամասի պահպանված պատերի /ըստ 27.06.2012 թվականին համաձայնեցված հ. 01/18–05/2–12255–573 նախագծով «1»–«14» առանցքներով/ սեյսմազինվածության, ուժեղացման նախագիծ՝ հաշվի առնելով ՀՀ մշակույթի նախարարության 13.07.2012թ. կայացած գիտամեթոդական խորհրդի էսքիզային նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները:*
- *Կատարել գլխավոր ճակատի վնասված հատվածների վերականգնումը, օգտագործելով պահպանված երեսաքարերը:*
- *Նախագծի կոնստրուկտորական մասը մշակել իրավասու կազմակերպության կողմից նախապես տրված տեխնիկական եզրակացության և պահանջների համաձայն:*

Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը — ________

Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմաններ — *Ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 08.02.2012թ. հ. 01/18–07/2–3934–78 ճարտարապետահատակագծային առաջադրանքի:*

Ինժեներական սարքավորումներ, ցանցեր — ________

| | | |
|---|---|---|
| ջրամատակարարում | ——— | պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների և ցանցերի նկատմամբ |
| կոյուղի | | |
| տաք ջրամատակարարում | | |
| էլեկտրամատակարարում | ——— | |
| գազամատակարարում | ——— | |
| թույլ հոսանքներ | ——— | |
| աղբահանում | ——— | |

Տարածքի ինժեներական նախապատրաստում — ———

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

Բարեկարգում — ———

(լանդշաֆտային ճարտարապետության վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

Շինարարական նյութեր — *Բետոն, մետաղ, սրբատաշ և կոպտատաշ քար:*

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

Պաշտպանական կառույցներ — *Նախատեսել արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ*

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

Հակահրդեհային պահանջներ — *Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները*

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — ———

Շրջակա միջավայրի պահպանում — *Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ*

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

Շինարարության կազմակերպում — *- Երևան քաղաքի ավագանու 16.03. 2012թ. N 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմաններին համապատասխան մշակել շինարարական հրապարակի կազմակերպման նախագիծ:*
*- Կազմել շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց:*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

## Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ  Պ Ա Ց Մ Ա Ն Ն Ե Ր

Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — *ՀՀ կառավարության 06.05.2010թ. հ.711-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգի» համաձայն:*

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտի վրա)

Միջանկյալ համաձայնեցում — ———

(քաղաքաշինական խորհրդում նյութերի նախնական համաձայնեցում)

Հասարակական քննարկումներ — ———

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

Համաձայնեցումներ — *Երևանի քաղաքապետի հետ:*

(նշվում են տվյալ օբյեկտի փորձաքննության և համաձայնեցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ)

Առաջադրանքի գործողության ժամկետը — *Երկու տարի*

(նշվում է նախագծման նորմատիվային ժամկետը՝ օբյեկտի փորձաքննության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում լիազորված մարմինների հետ համաձայնեցման ժամկետների հաշվառմամբ)

Այլ պայմաններ — *- Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների հաստատման մասին» հ.273-Ն հրամանով հաստատված դրույթներին:*
*- Նախագիծը համաձայնեցման ներկայացնել 5 օրինակից:*

*Սույն ճարտարապետահատակագծային առաջադրանքը դիտարկել 08.02.2012թ. տրված հ.01/18-07/2-3934-78 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ:*

*ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ*